# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

## <<ԿՄԵԲԲՖ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

**24 դեկտեմբեր 2018թ.**

**ք. Եղվարդ**

**ժամը 14⁰⁰**

***Մասնակցությամբ՝***

Հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Սարգսյան**

Հանձնաժողովի անդամներ՝ **Թ. Ավագյան**

**Ս.Եդիգարյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա. Վարդանյան**

**1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

1.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել թվով **երկու** մասնակից.

| Հ/հ | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | **անվանումը** | **գտնվելու վայրը (հասցեն)** | **կապի միջոցները** |
| 1 | **<<Մաքս Օյլ> ՍՊԸ** | ք. Երևան, Տպագրիչների 8 | (+374-10)-52-67-51<br>maxoil.llc@mail.ru |
| 2 | **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ** | ք. Երևան, Ե. Կողբացու 30 | (+374-10)53-42-33<br>flesh@fleshltd.am |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:**

**2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին**

2.1 **<<Մաքս Օյլ> ՍՊԸ** -ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

2.2 **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ** -ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:**

**3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին**

3.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| **Չափաբաժին 1** | | | | |
| **1** | **<<Մաքս Օյլ> ՍՊԸ** | **10 875 000** | **2 175 000** | **13 050 000** |
| **2** | **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ** | **11 000 000** | **2 200 000** | **13 200 000** |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:**

**4. Տեղեկատվություն բացված ծրարներում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 **<<Մաքս Օյլ> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

4.2 **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

4.3 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի ***(հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը***

***գնահատվում են անբավարար և մերժվում են***), Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4)-րդ ենթակետի ***(հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան)*** դրույթներով և հիմք ընդունելով <<ԿՄԵԲԲՖ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի I ՄԱՍ-ի 8.2-րդ կետը ***(հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան)***:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:**

5. **<<ԿՄԵԲԲՖ-ԳՀԱՊՁԲ-19/3>> *ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին***

5.1 Մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին տվյալները ներկայացված են ստորև.

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| **Չափաբաժին 1** | | | | |
| 1 | **<<Մաքս Օիլ> ՍՊԸ** | **10 875 000** | **2 175 000** | **13 050 000** |
| 2 | **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ** | **11 000 000** | **2 200 000** | **13 200 000** |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:**

**6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի երրորդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:**

**7. *Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները***

***Հանձնաժողովի նախագահ՝*** ____________ **Ա. Սարգսյան**

*(ստորագրությունը)*

***Հանձնաժողովի անդամներ՝*** ____________ **Թ. Ավագյան**

*(ստորագրությունը)*

____________ **Ս. Եդիգարյան**

*(ստորագրությունը)*

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ____________ **Ա. Վարդանյան**

*(ստորագրությունը)*